

ՀՈՂԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Լ. Ի. ԱԳԱՄՅԱՆ

ՍՍՀՄ յոթերորդ գումարման Գերագույն սովետի հինգերորդ սեսիայում (1968 թ.) ընդունված հողային նոր օրենքում պահանջվում է տալ երկրի հողային ֆոնդի տնտեսական գնահատումը:

Սակայն մինչև այսօր օրինակելի մեթոդիկա չի մշակվել հողային ռեսուրսների գնահատման համար: Դեռևս պարզություն չկա թե ինչ ուղղություններով պետք է կատարվեն այդ աշխատանքները: Այդ է պատճառը, որ հողի տնտեսական գնահատման խնդիրը որոշ տնտեսագետների կողմից տարբեր ձևով է ընկալվում և սխալ մեկնաբանվում:

Առաջին հերթին, պետք է պարզաբանել հողի գնահատման դրամական ձևի օբյեկտիվ անհրաժեշտության հարցը, և երկրորդը, ինչ ուղղություններով և ինչ նպատակով պետք է այն կատարել:

Հողի գնահատման օբյեկտիվ անհրաժեշտությունը պայմանավորված է արտադրության պրոցեսում նրա տնտեսական դերով ու նշանակությամբ, որտեղ նա հանդես գալով որպես համընդհանուր աշխատանքի առարկա և արտադրամիջոց՝ միաժամանակ նյութական արտադրության անհրաժեշտ պայմանն է ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում: Եթե յուրաքանչյուր նյութական արտադրության պրոցես ունի որոշակի հասարակական բնույթ, ապա հողի տնտեսական գնահատման խնդիրը և էությունը ամբողջությամբ պայմանավորվում է տվյալ հասարակարգի արտադրահարաբերություններով:

Արտադրության միջոցների հասարակական սեփականության պայմաններում հողը չի հանդիսանում առ ու վաճառքի առարկա, սակայն այն շարունակում է մնալ նյութական արտադրության կարևորագույն նախապայման, աշխատանքի համընդհանուր առարկա և արտադրամիջոց: Սոցիալիզմի պայմաններում հողի տնտեսական գնահատման օբյեկտիվ անհրաժեշտությունը կապված է մի կողմից ապրանքային տնտեսության կատեգորիաների հետ, մյուս կողմից բնատնտեսական պայմաններում առանձին հողամասերի բերրիության կայուն տարբերությունների գոյության հետ:

Հողի բերրիության հասկացությունը առավել ընդհանրացված ձևով տվել է Կ. Մարքսը. նա շեշտել է, որ բերրիությունը հողի օբյեկտիվ հատկություն լինելով հանդերձ՝ տնտեսական տեսակետից մշտապես կախված է հասարակական արտադրական հարաբերություններից¹:

Նյութական արտադրության պատմությունը ցույց է տալիս, որ արտադրողական ուժերի զարգացմանը համընթաց մշտապես փոխվել է հողի տնտեսական բերրիությունը, տիրապետող արտադրական հարաբերությունների տնտեսական օրենքների պահանջներին համապատասխան:

1 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, II մաս, Երևան, 1949, էջ 195:

Այսպիսով, հողի տնտեսական բերրիությունը հանդես է գալիս ոչ թե որպես սոսկ հողի բնական հատկություն, այլ որպես տնտեսական կատեգորիա: Հենց այս առումով էլ այն ենթակա է տնտեսագիտության ուսումնասիրության:

Հողի տնտեսական բերրիությունը օժտված լինելով հասարակության պահանջմունքները բավարարելու օգտակար հատկություններով՝ դառնում է հասարակական սպառարժեք:

Հողի հասարակական սպառարժեքի մեծությունը անմիջականորեն կապված է նրա քիմիական, ֆիզիկական, կենսաբանական և այլ որակական առանձնահատկությունների հետ: Ուստի պատահական չէ գոյություն ունեցող այն կարծիքը, որ հողի գնահատման համար որպես հիմք պետք է ընդունել նրա բնական հատկությունները: Հողի այդ հատկությունները բնական գիտությունների ուսումնասիրության օբյեկտ են: Նկատի ունենալով այդ հանգամանքը Կ. Մարքսը նշել է, որ սպառարժեքը որպես այդպիսին ճշտվում է քաղաքատնտեսության հետազոտության սահմաններից դուրս² և կազմում հողագիտության և ագրոքիմիայի ուսումնասիրության առարկան:

Սակայն դա չի նշանակում, թե Կ. Մարքսը ժխտում է սպառարժեքի դերը հասարակության տնտեսական կյանքում: Կ. Մարքսը սպառարժեքը ուսումնասիրել է ոչ միայն որպես իրերի բնական հատկությունների միասնություն, այլ դրանց օգտակարությունը ընդհանրապես սպառարժեք ուրիշների համար, հասարակական սպառողական արժեք³: Այնուհետև, հասարակության տնտեսական կյանքում հողային ռեսուրսների ունեցած բացառիկ կարևոր դերի շնորհիվ «սպառողական արժեքը որպես այդպիսին ձեռք է բերում տնտեսական նշանակություն»⁴:

Դրանից հետևում է, որ հողերի հասարակական սպառարժեքի ուսումնասիրությունը անկախ է հասարակական տնտեսաձևերից և ունի ինքնուրույն նշանակություն: Ըստ որում՝ տնտեսագիտությունը պետք է հետազոտի ոչ թե հողի ֆիզիկա-քիմիական և այլ բնական հատկությունները, այլ դրանց իմացությունից ելնելով զբաղվի որակապես տարբեր հողերի տնտեսական գնահատման ու արդյունավետ օգտագործման հարցերով: Տնտեսագիտությանն է պատկանում հողային ռեսուրսների խնայողաբար և նպատակային օգտագործման հիմնավորումը, որի տնտեսական հիմքը հանդիսանում է հողի գնահատումը:

Արտադրամիջոցների հասարակական սեփականության պայմաններում օբյեկտիվ անհրաժեշտություն է ոչ միայն հողի, այլև մյուս բնական ռեսուրսների տնտեսական-դրամական գնահատումը, քանի որ դրանք հասարակության արտադրողական ուժերի բաղկացուցիչ մասն են:

Սոցիալիստական արտադրական հարաբերությունների բնույթը և դրանով պայմանավորված տնտեսական օրենքների գործողությունը առավել ներպատասխան պայմաններ են ստեղծում հողային ռեսուրսների և մյուս բնական հարստությունների արդյունավետ օգտագործման համար: Սակայն հարկ է նշել, որ սոցիալիստական տնտեսության առավելությունները լրիվ չեն օգտագործվում: Այսպես օրինակ, երկրում տարբեր կարիքների համար գյուղատնտես-

² Կ. Մարքս, Քաղաքատնտեսության քննադատության շուրջը, Երևան, 1948, էջ 14:

³ К. Маркс, Соч., т. 19, М., 1961, стр. 385.

⁴ К. Маркс, Соч., т. 26, ч. III, М., 1964, стр. 260.

տեսական արտադրությունից ամեն տարի օտարվում են տասնյակ հազար հեկտար արգավանդ վարելահողեր:

Վերցնենք մեկ այլ օրինակ. օգտագործվող հանքավայրերի ընդերքում նավթի կորուստը երկրում կազմում է 47—50%, գունավոր մետաղներինը՝ 20—50%, ածխինը՝ 28%⁵:

Հողային ռեսուրսների և մյուս բնական հարստությունների անխնամ օգտագործման հիմնական պատճառը նյութական պատասխանատվության բացակայությունն է:

Երկրում իրականացվող տնտեսական ռեֆորմի պայմաններում կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսական և արդյունաբերական ձեռնարկությունների նյութական պատասխանատվության բարձրացումը, որպեսզի խնայողաբար և արդյունավետ օգտագործվեն երկրի հողային և բնական հարստությունները:

«Սպառողական արժեքները քննելիս,— գրել է Կ. Մարքսը,— միշտ ենթադրվում է նրանց քանակային որոշվածությունը⁶։ Այստեղից պարզ է, որ հասարակական սպառարժեք ներկայացնող հողային ռեսուրսների և մյուս բնական հարստությունների քանակային մեծությունը ինչ-որ չափերով պետք է արտահայտել։ Հետևապես անհրաժեշտ է նախ պարզաբանել, թե հողի և բնական մյուս ռեսուրսների հասարակական սպառարժեքի մակարդակը ինչ ցուցանիշներով կարելի է արտահայտել։ Երկրորդ, դա ինչ նպատակ է հետապնդում և ինչպիսին է դրա տնտեսական բնույթը գործնական հարցերի լուծման առումով:

Հասարակական սպառարժեք ներկայացնող հողային և բնական մյուս ռեսուրսները որպես օբյեկտիվ մեծություններ կարող են արտահայտվել քանակապես, որոնք ամեն մի ռեսուրսի համար տարբեր են։ Այստեղից օրինաչափորեն հարց է ծագում՝ ապա ինչպե՞ս չափակցել տնտեսական նշանակություն ունեցող տարբեր սպառարժեքների քանակները:

Հասկանալի է, որ դրանց քանակական մեծությունը կարելի է արտահայտել բնաձևով։ Սակայն դա հնարավորություն չի տալիս որոշել որակապես տարբեր հողերի (որտեղ մշակվում են բազմազան կուլտուրաներ) կամ բնական այլ ռեսուրսների սպառարժեքային մեծությունը, քանի որ յուրաքանչյուր ռեսուրս բնութագրվում է ուրույն հատկանիշներով։ Ուստի հիշյալ սկզբունքով հնարավոր չէ հանրագումարի բերել և չափակցել տարբեր սպառարժեք ունեցող հողային ռեսուրսների տնտեսական նշանակությունը, որը լուրջ խոչընդոտում է տնտեսաշվարկի արմատավորմանը։ Մյուս կողմից, բնաձևի ցուցանիշների գործնական կիրառման շրջանակը խիստ սահմանափակվում է, որի հետևանքով այն դառնում է նվազ գործածելի:

Ապրանքա-դրամային հարաբերությունների առկայության պայմաններում հողային և մյուս բնական ռեսուրսների հասարակական սպառարժեքը հանդես է գալիս ոչ միայն բնաիրային, այլև արժեքային-դրամական ձևով:

⁵ Տե՛ս «Правда», 27. I. 1970.

⁶ Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, Երևան, 1954, էջ 421.

Սովետական անվանի տնտեսագետներ Ս. Ստրումիլինը⁷, Տ. Խաչատուրովը⁸, Ն. Ֆեդորենկոն⁹, Ս. Չերյոմուշկինը¹⁰, Մ. Բրոնշտեյնը¹¹, Ե. Կարնաուխովան¹², Գ. Ռոմանչենկոն¹³ և այլք գտնում են, որ ապրանքա-դրամային հարաբերությունների պայմաններում հողի տնտեսական գնահատումը չի կարող շրջադառնալ արժեքային-դրամական ձև:

Հողը որպես արտադրամիջոց գործում է մյուս արտադրամիջոցների հետ համատեղ՝ Եթե սոցիալիստական հասարակարգում ապրանքային արտադրության պայմաններում բոլոր նյութական արտադրակազմի ֆոնդերը ունեն արժեքային արտահայտություն, ապա դրանից չի կարող զերծ մնալ նաև հողը, որպես արտադրության միջոց:

Արտադրամիջոցների հասարակական սեփականության պայմաններում, հողային ռեսուրսների տնտեսական գնահատումը, որպես օրինաչափ անհրաժեշտություն, պետք է կատարել՝ ա) օգտագործելի հողատեսակների որակական համեմատական գնահատումը բալային ցուցանիշներով, բ) հողային ռեսուրսների գնահատումը բացարձակ ցուցանիշներով՝ դրամական արտահայտությամբ:

Օգտագործելի հողատեսակների համեմատական տնտեսական գնահատման զլխավոր խնդիրն է բացահայտել նրանց տնտեսական նշանակությունը և հասարակական աշխատանքի արտադրողականության վրա ունեցած ազդեցությունը:

Հողի համեմատական գնահատումը պետք է հիմնական ելակետ հանդիսանա պետության և գյուղատնտեսական ձեռնարկությունների փոխհարաբերությունների կատարելագործման, տնտեսությունների գործունեության գնահատման, տնտեսաշվարկի արմատավորման և մի շարք այլ հարցերի ճիշտ լուծման համար:

Եթե ընդունում ենք հողային ռեսուրսների (և բնական մյուս հարստությունների) հասարակական սպառարժեքի քանակական մեծությունը, որի բնութագրման առավել նախընտրելի մեթոդը արժեքային ձևն է՝ միջնորդված դրամական արտահայտությամբ, ապա դրանից հետևում է, որ դրանք պետք է ունենան իրենց «գինը»:

Արժեքի աշխատանքային տեսության առումով հողային ռեսուրսների և բնական մյուս հարստությունների «գին» հասկացությունը չի համապատասխանում իր բովանդակությանը (իռացիոնալ է): Արտադրամիջոցների մասնավոր սեփականության պայմաններում հողի և բնական մյուս ռեսուրսների համար սահմանված «գին» մեծությունը իրականում ոչ թե դրանց արժեքի դրամական արտահայտությունն է, այլ սպառարժեքի մեծությունը:

Անկախ հասարակական կացութաձևից՝ հողի «գին» հասկացությունը իրացիոնալ լինելով հանդերձ, չի ժխտում հողային ռեսուրսների տնտեսական ար-

7 Տե՛ս «Вопросы экономики», 1967, № 8, էջ 60:

8 Տե՛ս նույն տեղում, 1969, № 1, էջ 66:

9 Տե՛ս նույն տեղում, 1968, № 3, էջ 94:

10 Տե՛ս «Земельный кадастр СССР», 1967, էջ 102:

11 Տե՛ս «Вопросы экономики», 1968, № 5, էջ 102:

12 Տե՛ս նույն տեղում, 1968, № 8, էջ 88:

13 Տե՛ս «Экономика сельского хозяйства», 1969, № 9, էջ 8:

ժեքի ի հայտ բերումը, որը պայմանավորված է տիրապետող սոցիալ-տնտեսական հարաբերություններով:

Սոցիալիզմի պայմաններում հողալիքն ռեսուրսների (և մյուս բնական հարստությունների) դրամական գնահատման հիմնական խնդիրն է որոշել դրանց հանրագումարային կամ ամբողջական մեծությունը որպես արտադրության միջոցի: Այդպիսի գնահատման նպատակն է հասարակությանը ճիշտ պատկերացում տալ գյուղատնտեսական ձեռնարկությունների արտադրական ֆոնդերի մասին, հնարավորություն ստեղծել տնտեսությունների գործունեության օբյեկտիվ վերլուծության և գնահատման համար: Դրանով կարելի է ճիշտ կարգավորել հանրային հողօգտագործման բազմաթիվ հարցեր, ինչպես նաև կանխել հողերի շոյալումները:

Կոլտնտեսականների համամիութենական III համագումարում ամենայն խստությամբ ընդգծվեց, որ ռով ոտնձգություն է կատարում հողի դեմ, անփութ վերաբերմունք է ցույց տալիս նրան, չի բարձրացնում նրա բերրիությունը, նա խարխուլում է ժողովրդի բարեկեցության նյութական նախահիմքը¹⁴:

Ճիշտ է, հողալիքն օրենքում ուղղակի կերպով չի ասվում հողի դրամական գնահատման՝ «գնի» մասին, սակայն դա ամենևին չի նշանակում թե այն առհասարակ ժխտված է: Ընդհակառակը, վերջին տարիներին հողի դրամական գնահատմանը խիստ կարևոր նշանակություն է տրվում:

Հողալիքն օրենսդրության համաձայն՝ այն հիմնարկ-ձեռնարկությունները, որոնց ոչ գյուղատնտեսական կարիքների համար հատկացվում են օգտագործելի հողատարածություններ, պարտավոր են փոխհատուցել գյուղատնտեսական արտադրության կորուստները և հողօգտագործողներին պատճառած վնասը: Հասկանալի է, որ հիշյալ կազմակերպությունները գյուղատնտեսական արտադրության կորուստները և հողօգտագործողներին պատճառած վնասը պետք է փոխհատուցեն դրամով: Ուրեմն հողի դրամական գնահատման անհրաժեշտությունն անժխտելի է: Այս հանգամանքը կստիպի, որպեսզի գյուղատնտեսական արտադրության հետ առնչություն չունեցող շինարարական և այլ կազմակերպություններ իրենց նախահաշիվներում հաշվի առնեն հողի տնտեսական գնահատականը, նրա «գինը»: Պետք է ենթադրել, որ արդյունաբերական և այլ շինարարական կազմակերպությունները կձգտեն առավել արդյունավետ այն սարքերակի ընտրության, որը ավելի էժան կարող է լինել:

Հողի և մյուս ռեսուրսների դրամական գնահատումը անհրաժեշտ է, որպեսզի սոցիալիստական հասարակությունը լիարժեք պատկերացում ունենա իր ազգային հարստության մասին:

Ձնայած հողի և բնական մյուս ռեսուրսների տնտեսական գնահատման նկատմամբ բուռն հետաքրքրությանն ու շթուլացող ուշադրությանը, մեր հանրապետության որոշ տնտեսագետներ ելնելով դրա սխալաստիկ ըմբռնումից, հանդում են սխալ եզրակացության:

Հողի համաժողովրդական սեփականության պայմաններում «ժողովուրդը,— դրում է Ի. Խնկանոսյանը,— չի կարող ինքն իր հողը գնել կամ իրեն վաճառել: Հետևապես հողի գնի մասին խոսելը ավելորդ է»¹⁵, Այնուհետև նա զրտնում է, որ տնտեսագետների «պարտքն է տնտեսականորեն հիմնավորել կոմու-

¹⁴ «Սովետական Հայաստան», 26. XI. 1969.

¹⁵ Նույն տեղում, 13. VI. 1968.

նիստական կուսակցության և սովետական կառավարության իմաստուն որոշումների օրյեկտիվությունը, անհաշտ պայքար մղել սուբյեկտիվիստական, վոլյունտարիստական արարքների դեմ...»¹⁶, նույն կարծիքն է հայտնում նաև Ալ. Թադևոսյանը: Նա շփոթում է հողի տնտեսական գնահատման և հողի գին հասկացությունները, ժխտում բնական ռեսուրսների դրամական գնահատման հարցը և ընդգծում «որ այն ոչ մի օգուտ չի տա, բայց կարող է պատճառել հսկայական չարիք»¹⁷:

Վկայակոչելով արժեքի աշխատանքային տեսությունը, հիշյալ հեղինակները փորձում են ապացուցել, որ հողը աշխատանքի արդյունք չլինելով՝ չունի գին, մոռանալով որ դարերի ընթացքում մշակվող հողերի մեջ ներդրված հասարակական աշխատանքի հետևանքով դրանք որոշակի չափով մարդկանց աշխատանքի արդյունք են: Բացի այդ հայտնի է նաև, որ հողը ունենալով բերրիության կարևոր հատկություն, որով այն բնութագրվում է որպես բացառիկ արտադրության միջոց, տարածության մասնափակ է, չի վերարտադրվում, չի մաշվում և անփոխարինելի է:

Ծիշտ է, արժեքի աշխատանքային տեսության համաձայն դժվար է որոշել տարրեր հողերի բարելավման վրա կատարված ծախքերի հաշվարկը: Եթե նոր իրացված հողերի վրա կատարված ծախքերը հնարավոր է հաշվարկել, ապա վաղուց յուրացված հողերի համար դա պայմանական է: Ուստի պարզ է, որ շատ դեպքերում ստացված արդյունքները համոզիչ չեն կարող լինել, իսկ երբեմն էլ՝ անհամեմատելի: Հետևաբար հողի դրամական գնահատման «գնի» համար անհրաժեշտ է որոշել դրա սպառարժեքի մեծությունը, ելակետ ընդունելով որոշակի ժամանակահատվածում տնտեսական բերրիության մակարդակը:

Այսպիսով արտադրության միջոցների հասարակական սեփականության և տնտեսաշարժարկային հարաբերությունների զարգացման պայմաններում հողի գնի և գնահատման հարցերի ճիշտ լուծումը հրատապ անհրաժեշտություն է և անհետաձգելի խնդիր: Իսկ Հայաստանի բնատնտեսական խիստ խայտաբղետության պայմաններում հողի տնտեսական գնահատումը ունի բացառիկ նշանակություն, որի մեթոդական հարցերը արժանի են հատուկ լուսաբանման:

ЭКОНОМИЧЕСКАЯ ОЦЕНКА ЗЕМЛИ

Л. И. АДАМЯН

Резюме

Чтобы правильно понять сущность и необходимость оценки земли в условиях социализма, необходимо учитывать, что: а) земля—важнейшее материальное условие производства, всеобщий предмет и средство труда продолжает оставаться и в условиях социализма, б) в отличие от всех других средств производства земля ограничена и невоспроизводима; в) земля является незаменимым вечным средством производства; г) одним из существенных особенностей земли является плодородие, которым она характеризуется как единственно оригинальное средство

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ «Հայաստանի ժողովրդական տնտեսություն» № 11, 1969, էջ 81:

производства: д) различные земельные участки обладают различным уровнем плодородия.

Мы разделяем мнение тех аграрников и экономистов, которые считают, что работу по экономической оценке земли следует проводить по следующим направлениям:

1. Сравнительная экономическая оценка земли в относительных показателях по 100 балльной системе как с точки зрения производства отдельных культур, так и в их совокупности.

2. Оценка влияния качества земли на эффективность дополнительных затрат.

3. Оценка земли в абсолютных показателях в денежном выражении, т. е. определение ее расчетной цены.

Результаты оценки земли имеют важное значение для повышения научного уровня аграрной политики и совершенствования организации производства на сельскохозяйственных предприятиях.